Քաղաքացիական գործ ԵԴ2/0449/02/23

ՀՀ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀԱՅՑԱԴԻՄՈՒՄԸ ՎԱՐՈՒՅԹ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆՈՂԻՑ
ԱՊԱՑՈՒՅՑՆԵՐ ՊԱՀԱՆՋԵԼՈՒ ՄԱՍԻՆ

26-ը ապրիլի 2023թ. ք.Երևան

Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանը /դատավոր Ա. Մկրտչյան/, ուսումնասիրելով «Բաքեթ Լիսթ Տուրս» ՍՊ ընկերության կողմից ներկայացված հայցադիմումն ընդդեմ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի՝ պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի որոշումներն անվավեր ճանաչելու պահանջի մասին

ՊԱՐԶԵՑ

«Բաքեթ Լիսթ Տուրս» ՍՊ ընկերությունը 2023թ. ապրիլի 7-ին հայցադիմում է ներկայացրել Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարան ընդդեմ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի՝ պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի որոշումներն անվավեր ճանաչելու պահանջի մասին:

Հայցադիմումը 17.04.2023թ. մակագրվել է դատավոր Արամ Մկրտչյանին և 21.04.2023թ. հանձնվել դատավորի աշխատակազմին:

Բացակայում են հայցադիմումը վարույթ ընդունելը մերժելու կամ վերադարձնելու հիմքերը, ուստի հայցադիմումը պետք է ընդունել վարույթ:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.5 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների հետ կապված վեճերը քննվում և լուծվում են հայցադիմումը վարույթ ընդունելուց հետո՝ երեսուն օրվա ընթացքում: Դատարանի պատճառաբանված որոշմամբ սույն մասով նախատեսված ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ՝ մինչև տասն օրացուցային օրով:

Նույն օրենսգրքի 234.6 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հայցադիմումը վարույթ ընդունելու հետ միաժամանակ դատարանը կայացնում է որոշում՝ պատասխանողից տվյալ գնման գործընթացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները պահանջելու մասին:

Նույն օրենսգրքի 234.8-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործին մասնակցող անձինք և նրանց ներկայացուցիչները դատական նիստի ժամանակի և վայրի, ինչպես նաև սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում առանձին դատավարական գործողություններ կատարելու մասին ծանուցվում են էլեկտրոնային հաղորդակցության միջոցով ծանուցագրերը և այլ փաստաթղթեր սույն օրենսգրքի 97-րդ հոդվածով սահմանված կարգով հայցադիմումում նշված էլեկտրոնային փոստին ուղարկելու եղանակով:

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 124-րդ, 125-րդ, 234.5-րդ, 234.6-րդ, 234.8-րդ, 188-րդ, 199-րդ, 200-րդ հոդվածներով, Դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

Հայցադիմումն ընդունել վարույթ, եզրափակիչ դատական ակտի հրապարկման օր սահմանել 2023թ. հունիսի 2-ը:

Կողմերի ծանուցումն իրականացնել էլեկտրոնային հաղորդակցության միջոցով՝ հայցադիմումում նշված էլեկտրոնային փոստի հասցեներին ուղարկելու եղանակով:

Պատասխանող «Երևանի պետական համալսարան» հիմնադրամից պահանջել սույն որոշումն ստանալու օրվանից հնգօրյա ժամկետում Դատարանին ներկայացնել ԵՊՀ-ԳՀԾՁԲ-23/11 ծածկագրով գնման գործընթացի՝ իր տիրապետության ներքո բոլոր ապացույցները:

Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից և բողոքարկման ենթակա չէ:

ԴԱՏԱՎՈՐ Ա. ՄԿՐՏՉՅԱՆ

Digitally signed by MKRTCHYAN ARAM 1712720074
Date: 2023.04.26 14:08:28 AMT